էին՝ Մեդուսայի գլեն մեռ. 83 հատը Լուիզէն, 35՝ Կասիոպէէն, 40՝ Ս. Շապլին գլխէն և 78 հատ անորոշ կէտերէ։

Նոյ. մէջ ինկած աստղներն աւելի նուազ են թուով՝ քան օգոստոսի մէջ։ 1799 և 1833 տարիներուն նոյ. ամսուն մէջ խիստ բազմաթիւ եղան աստղները. Պ. Ք)ուպէրս աստղաբաշխը կը կարծէ որ նոյն երևոյթը 1867ին աստեղները նորէն պիտի տեսնուի։

Նոր տոմարի 1859ին նոյ. 1ը՝ Հրէից 5620 տարւոյն Խէսոռան ամսուն 4ին կը պատասխանէ, և Տաճկաց 1276 տարւոյն Ռեպէ-ալ-ախիր ամսուն 6ին։ Հրէից քաղաքամիտը կը սկսի նոյ. 27ին, և Տաճկաց Ճէմազի-ալ էվվէլ ամիսը նոյ. 25ին։

Գաղղիոյ հասարակապետական 6 տարւոյն Բրումէր ամսուն 10ը նոր տոմ 1859 տարւոյն նոյ. 1ին կը պատասխ նէ, և Ցրիմէր[1] ամսուն 1ը՝ նոյ. 2 կը հանդիպի։

Լուսաւորեան եկեղեցին նոյ. առաջ օրն Ամենայն սրբոց տօնախմբութիւն կը կատարէ, և երկրորդ օրն ալ Մեռելոց նուիրած է, յորում կ'աղօթ հաւատացեալք հանգուցեալ հոգ համար, և օրուան մէկ մասն ալ ընդմանոցներու այցելութեան երթ լով կ'անցընեն։ Հայկական եկեղե այն տարիներն որ Ս. Գէորգայ տօ մինչև 'ի Յիսնակաց բարեկենդան ո շաբաթ կը հանդիպի՝ ութերորդ շ թուն վերջին օրը Ամենայն սրբոց տ կը կատարէ։

ՄԱՆՐ ԳԻՏԵԼԻՔ

Մեղրի օգտակարութիւնը մարդոս առաջնութեան։

— Հին ատենի իմաստունները մեղրն ընդհանուր և խիստ օգտակար գեղ մը կը սեպէին. ինչուան շատ ծերեր կ'ըսէին թէ մեղր ուտելով էր որ իրենց խոր հասակն հասեր էին. ինչպէս Դեմոկրիտոս Աբատերացին՝ որ 109 տարուան էր, Անակրէոն՝ 115 տարեկան, Պոլիոս-Հռոմուլոս՝ որ 100 տարին անցեր էր, և այլն։ Հիպոկրատ անուանի բժիշկը խորհուրդ կու տար մեղր ուտելու երկար ատեն ապրելու համար, և ինքն ալ պարարտ ծերութեան հասաւ։ Հին Յոյներն իրենց գինիները մեղրով կ'անուշցընէին. անկէ զատ՝ անով ըմպելիք մ' ալ կը շինէին, որ շատ կը գործածուէր իրենց մէջ։ Անակրէոն շատ կ'խորժէր այդ ըմպելիքը, և անիկայ խմելէն վերջը կը շինէր իր զուարթ տաղերը։ Յոյն և հռոմայեցի ըմբիշներն ոչ երբէք ասպարէզը կ'իջնային առանց առաջուց մեղր ուտելու։ Կ'ըսուի թէ Պիւթագորաս և Դեմոկրիտոս հացով ու մեղրով կ'ապրէին, մոքերնին գրած ըլլալով որ այս կերպով կեանքերնին կ'երկրնար և մոքերնին աշխոյժ ու զօրաւոր կը մնար։

Նոր բանաստեղծական երևոյթ մը։—Պ. Վիկտոր Հիւկոյ գաղղիացի արդի հռչակաւոր բանաստեղծը, որ այնչափ անուն հանած է իր Ներոն Զայնի և Տերեւ Ալենանայի ըսուած տաղերու հաւաքմունքներովը, և որ հիմա Գաղղիայէն հեռու կը բնակի իր քաղաքական անկախ կարծիքը պատճառաւ, վերջերս քերթութեանց նոր հաւաքումմ՝ ալ հրատարակեր է՝ Մոգէան Դարոյ անունով. ասոր մէջ ամբաւ զանազանութիւն կայ պա կան նիւթերու, բայց հեղինակը գրքին յառաջ բանին մէջ կ'ըսէ՝ թէ ասոնց ամէնը սկզբնաւոր թիւն մըն են և միութիւն կազմող մասունք մտածութեան մը, կամ թէ ըսենք մարդկային ընդ հանուր գիւցազներգութեան մը, զոր ուրիշ թուածներով պիտի ամբողջացնէ։ Այս պատ ռաւ գեռ ստոյգ և ապահով գաղափար մը չ նար ըլլալու այս նոր 'ի լոյս ելած երկու հատ ներուն վրայ. սակայն անանկ մը կ'երևայ՝ որ Հիւկոյի հանճարն հասակին հետ (57 տարու է քերթողը) սկսեր է բանաստեղծութեան գ գոսին ծայրէն դէպ 'ի վար իջնալ։ Ցիրաւի մ գուս կարեկցութիւնն ու գովքովը կը շարժէ՝ խ խորին մեծարանաց հետ, երբոր կը տեսնէ որ ն իակ հեղինակն ինքն իր անձին վրայ կը խոսո այս տխուր ճշմարտութիւնն հեռանալ չուզ մառօտ տողերուն մէջ, զորոնք իր քերթուած ճակատը գրած է՝ իբրև ընծայական մը տա հայրենիս.

Ա՞ Գաղղիս

Ընդքեզ, Մատեանդ, տարցի հոմ
Ի Գաղղիա ուր ծընայ.
Արմատաքին խրլեալ ծառ
Զմեռեալ տերեւն ընծայէ։

ՎԻԿՏՈՐ ՀԻՒԿՈՅ

1 Գղ. Frimaire.

Digitized on 2017-07-12 08:51 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.c2847014
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google